**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի նոր մարզադպրոցի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությանների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՔՆ-ԲԸԾՁԲ-15/5 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2015 թվականի նոյեմբերի 13-ին կնքված N ՔՆ-ԲԸԾՁԲ-15/5 պայմանագրում 2018 թվականի փետրվարի 16-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ | ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 1717-Ն որոշում: |
| Փոփոխության նկարագրություն | ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի նոր մարզադպրոցի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կնքված N ՔՆ-ԲԸԾՁԲ-15/5 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցի տրամադրում: |
| Փոփոխության հիմնավորում | ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 36-րդ կետի 12-րդ ենթակետ և Պայմանագրի 4.1.2 և 7.3 կետեր: |

Պատվիրատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 5

## 13.11.2015թ. կնքված N ՔՆ-ԲՇԾՁԲ-15/5 գնման պայմանագրի

ք. Երևան 16.02.2018թ.

<<ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ՆՈ ՕՆԱ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Ա. Խաչատրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի էջմիածին քաղաքի նոր մարզադպրոցի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 13.11.2015թ. կնքված N ՔՆ-ԲՇԾՁԲ-15/5 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.1.2 և 7.3 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. *Համաձայնագրի առարկան*

1.1 Կատարողի կողմից Պայմանագրի N1 հավելվածով հաստատված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 2018թ. ընթացքում մատուցման ենթակա ծառայությունների գինը սահմանել **117 600 (մեկ հարյուր տասնյոթ հազար վեց հարյուր)** ՀՀ դրամ՝ ներառյալ Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

1.2 Հաստատել վճարման ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

### 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելված N 1-ը բաղկացած 1 (մեկ) էջից համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| <<ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկ | <<ՆՈ ՕՆԱ>> ՍՊԸ |
| ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3 | ք. Արմավիր, Սայաթ-Նովա 122 շենք |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | <<Հայէկոնոմբանկ>> ՓԲԸ, Արմավիր մ/ճ |
| Հ/Հ 900011012706, ՀՎՀՀ 02565827 | Հ/Հ 163108167632, ՀՎՀՀ 04417375 |

Աշխատակազմի ղեկավար՝ Տնօրեն՝

__________ Ա. Մկրտչյան ---------------------- Ա. Խաչատրյան

(ստորագրություն) (ստորագրություն)

Կ.Տ. Կ.Տ.

Հավելված N 1
*13.11.2015թ. կնքված ծառայությունների մատուցման*
*N ՔՆ-ԲԸԾՁԲ-15/5 գնման պայմանագրի*
*16.02.2018թ. կնքված N 5 համաձայնագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

**(բաժին 09, խումբ 06, դաս 01, ծրագիր 06)**

ՀՀ դրամ

| Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը տարի |
| ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի նոր մարզադպրոցի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ | - | - | 4 300 | 28 600 | 28 600 | 28 600 | 82 000 | 82 000 | 82 000 | 117 600 | 117 600 | 117 600 | 117 600 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
<<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012706, ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար՝

________________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
<<ՆՈ ՕՆԱ>> ՍՊԸ
Ք. Արմավիր, Սայաթ-Նովա 122 շենք
<<Հայէկոնոմբանկ>> ՓԲԸ,
Արմավիր մ/ճ
Հ/Հ 163108167632,
ՀՎՀՀ 04417375

Տնօրեն՝

________________ Ա. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.